

# Ա Ր Ա Ր Ա Տ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆՇԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԵԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԹԻՒ Կ. - ՇՐՋԱՆ Զ. 1873. ՏԵՐԻ Զ. - ՅՈՒՂԻՍ 31

### ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆՈՒՐԵՔ ԸՆՅՈՑ ԵՎԵՂԵՑԱԿԱՆԵՑ  
ՊԱՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

ՀՈՒՆՅԱՆ ՈՒՍՈՒՄՆ ԵՒ ՆՕՐԱ ՍԱՀՄԱՆԸ.

Մեր հոգի որ դպրոցաց և ուսումնարանաց համար խօսեցանք անցեալ թուով, և ներկայիս պարտիմք սոցա մէջ աւանդուելիք անարկայից տեսակները և սահմանները կամ թէ հոգեւոր կամ կրօնական ուսումնի ու գիտութիւնները որոշել:

Մեր լիզուի ուսման կարեւորութիւնը՝ շայտ համարինչ նշանակութիւն ունենալն և որպիսի կենսական խնդիր կազմելն վերստին բացատրութեանց կարօտ չէ, և որ մեր հոգեւոր ուսումնարանաց գլխաւոր պաշտօն և պարտաւորութիւններէն է հանդերձ կցորդ պարագայիւքն, և ոչ մի թիւր մեկնութիւն և գատողութիւն չընդունիր:

Իսկ հոգեւոր կամ կրօնական ուսումնի ու գիտութիւնները ի՞նչպէս պէտք է իմանալ և զիարդ գոյնոսիկ սահմանափակել կարելի է:

### Ահաւասիկ:

Կրօնական ուսումնի և գիտութիւնքը պարտ է իմանալ մեր Վրիստոսական հաւատոյ դաւանութիւնը, Աստուածագոյտութիւնը, մեր հոգեւոր փրկութեան ճանապարհները, և մեր առ Աստուած, առ ընկերս, և առ անձինս առանձին առանձին ունեցած պարտաւորութիւնքը և յ. ուսանել, զիտել, գործել, միանգամայն ջանալ նորօք վերջին կատարելութեան հասնել:

Կրօնական ուսումնի ու գիտութիւնները լիկ Սաղմոս, կամ Նարեկ, կամ Աստուածաշունչի և կամ Վրիստոսեականի թեթե հրահանգներ ընթանելով կարելի չէ ամփոփել:

Կրօնն որքան պարզ և կատարեալ ձգտարութեանց վերայ հիմնեալ լինի և աւանդուի, այնքան իւրաքանչիւր Վրիստոսեական պարտքն է հիմնաւոր և ներքին համոզմանով ուսանել: Որպէս զի աւագի վերայ հիմնեալ շինութեան ջնամիր:

Ուրեմն ի՞նչպէս:

Վրիստոսեական հաւատոյ ձգտարութիւնքը յայնժամ աւելի պաշտելի և



խորարմատ կտպաւորուին ի սիրաս՝ երբ իւրաքանչիւր քրիստոնեայն ըստ արժանւոյն իմանալով՝ հմտանալով՝ քննելով և համոզուելով կմթերեն զայնա ի միտս: Աւստի զօ. երբ մի քրիստոնեայ կամ մի մանուկ կլսէ թէ՛ երկնից և երկրի ստեղծող Աստուած կայ, թէ Աստուած զԱդամ և զԵւան ստեղծեց, թէ մարդկային սերունդը ի սոցանէ աճեցաւ, թէ մարդիկ երբեմն երբեմն մեղանշեցին և Աստուած ջըրհեղիղով և այլ միջոցներով պատժեց զմարդիկ, թէ Ադամ այսքան և Մաթուսաղայ այնքան տարի ապրեցան, թէ Խարայի լացիք Աարմիր ծովէն անցան, թէ Յեսուէ կարողացաւ արեգական հրամայել զի իւր բնական պարտաւորութեան հակառակ անշարժ կենայ, թէ Վրիստոս Մարիամ կուսէն ծնուաւ և պէս պէս հրաշագործութիւնք կատարեց և զաշխարհ փրկեց, թէ Վրիստոսի մկրտութեան ատեն Յորդանան գետոյ ընթացքը նորօրինակ կերպով սքանչելագործուեցաւ և յետս նահանջեց, և այլն և այլն, և եթէ այս ամենը առանց մեկին՝ պարզ և համոզիկ բանախօսութեանց և բացատրութեանց հաղորդուի՝ մինչև անգամ ուսանողն ինքնին չզգարով և չկշռելով Աստուածային ճշմարտութիւններ, յայտնի բան է՝ զի նա կդառնայ Բեռնայ, որ իւրաքանչիւր հմուտ անձի ձեռքով կրնայ այսպէս կամ այնպէս շրջել, և այսպիսի համոզմունքը միշտ անհիմն՝ առաւել վրտանգաւոր և զխրատիտիտի է:

Վակայն երբ խորհրդածուի թէ՛ երկնից և երկրի վերայ եղած այսքան բիւրատեսակ արարածներ, աշխարհիս սքանչելի գիւրքեր, աստեղայ գեր քան զմիտս կարգա-

ւորութիւնք և շրջաններ, և բնութեան ազգի ազգի և հիանալի պարզեւներ և տեսարաններ անշուշտ մի սքեղօն ունին, և որ միշտ սոցա բոլորից վերայ խնամք կատարած է և կպահպանէ, կզարգացնէ, և փոխադարձ այնպիսի շողկապներով հիւսած և միացուցած է, որ միայն մի գերագոյն էակէ կարողութեան յատուկ և ստեղծագործութիւն կարելի է ընծայել, և այս գերագոյն էակն է Աստուած և երկնից և երկրի Տէր, և որ այս ամենը վայելելոյ համար ստեղծեց մարդիկը, և թէ երբեմն երբ մարդիկ ապերախտութեամբ վարուեցան իւրեանց Արարիչ Աստուծոյ դէմ՝ պատժուեցան, և այսպիսի դէպքերում՝ զորօրինակ ջըրհեղիղ՝ Աարմիր ծովի և Յորդանան գետոյ անցից, և արեգական Յեսուէյ հրամանին խոնարհելոյն մէջ Աստուածային գերմարդկային զօրութիւնքը իմանալոյ համար պէտք է հեռագոտել նոցա արտաքոյ բնական կարգի և գեր քան զմիտս մարդկային պատահումները և հեռեանքները, թէ ի՞նչ է պատճառ որ Ադամ, Մաթուսաղայ և այլ ոչ սակաւ նախնիք (նախահայրք) հարիւրաւոր տարիներ ապրած են՝ մինչ զիս ի նոցանէ քանի դարեր յետոյ մարդկանց տարիքը հարիւր յիսուներ չեն որբել, և այն միլիոններու մէջ հազու մի քանի անձինք կպատահին, և առհասարակ 60-70-80 տարի կապրին, վերջապէս սոյնպիսի խնդիրներով և պարզ բացատրութիւններով ուսեալ կրօնը և իւր ճշմարտութիւնքը անշուշտ հիմնաւոր համոզմունք կկազմեն ուսանալ քրիստոնէի մասց և սրտից մէջ, և ճշմարիտ Աստուածպաշտութիւնը կթագաւորէ ամենուրեք, և կրօնական յեղատիտիտի թիւններ չեն յա-



ձախեր, և Ալիեղեցին Վրիստոնի առաւել  
 պտուակումանց և հակառակասէր շինթու-  
 թեանց և բարմահնար դաւանութեանց  
 և հերձուածոց շմասնուիր, ևս դառն վը-  
 տանդներու շնթարկուիր երբէք:

Նա մանաւանդ ոչ թէ լոկ կրօնի, այլ  
 և Սուրբ Գրոց ուսումը քաջ ստանալոյ և  
 իմանալոյ համար պէտք է ներքին և ար-  
 տաքին զիտութեանց շատ առարկայից  
 հմասութիւն ունենալ: Յաւելցո՞ւր սոցա  
 մէջ կրօնի յարակից Ալիեղեցւոյ հիմնա-  
 դրութեան, յարատեութեան և այլ ան-  
 ցից, ևս ինմին պաշտուած կարգաց, կա-  
 նոնաց, Աստուածպաշտութեան, երգոց և  
 արարողութեանց թէ ի մասնաւորի և թէ  
 յընդհանուրին պատմութիւնքը, և ահա  
 բաւական խելամուտ լինել հնար է՝ թէ  
 ի՞նչ է կրօնական ուսումն և նորա սահ-  
 մանն:

Շրդ աւելորդ է կրկնել, թէ կրօնի հիմ-  
 նաւոր ուսումն մի միայն Սաղմոս, Ստա-  
 կարան, Թաւմազիրք, և Վրիստոնէական  
 ինչ ինչ հրահանգներ ընթեռնելով չըբո-  
 վանդակուիր, այլ պէտք է զն այլ ևս պի-  
 տանի և անհրաժեշտ առարկաներ ուսա-  
 նելով ստանայ:

Այք են այն առարկաներ:  
 Ի փոքուէ սկսելով, ինչպէս նոր այբբէն  
 ուսանողն (ըստ մեզ) Վերականէն ըս-  
 կիլքն առած հեղհեռէ հասարակ ըն-  
 թերցանութեան մէջ կկրթուի և կզար-  
 դանայ, այսպէս կրօնի ուսումն ևս Աս-  
 տուածածանօթութենէն սկիլքն առած,  
 կրօնի մանր գիտելիքներէն կյառաջադի-  
 մէ քրիստոնէական հաւատոյ՝ դաւանու-  
 թեանց և խորհրդոց մինչև վերին աստի-  
 ճան գիտութեանց մէջ, և Ալիեղեցւոյ թէ

մասնաւոր և թէ ընդհանուր պատմու-  
 թեանց, Աստուածաշունչ Ս. Գրոց իմա  
 շին և Նոր Կտակարանաց՝ ինչպէս նա և  
 Ալիեղեցւոյ ամենայն անցիցն անցելոց քաջ  
 տեղեկանալոյ համար ընդհանուր ազգաց  
 տիեղերական պատմութեան, թուարա-  
 նութեան, աշխարհագրութեան, բնական  
 գիտութեանց, աստեղարաշխութեան և  
 մինչև բժշկութեան արհեստին խորամուխ  
 և գիտակ կալ պէտք է:

Աթէ կրնգունիմք կրօնական ուսումն  
 բարձր և վսեմ միանգամայն նուիրական  
 առարկայ, ուրեմն այսպէս և սոքա են նո-  
 ռա լծորդ գիտութիւնքը և պիտի լինին:

Վարքէն, ի հակիրճ բան ասեմք, կար-  
 դալով Յեսուայ հրամանով արեգական  
 դադար առնուլը, Խորայիլացւոց Կար-  
 միր ծովէն անցնելը իբրև ցամաք երկրէն,  
 Յորդանան գետոյ ընթացից անակրնկալ  
 դադարելը՝ և յետոյ յետոյ դարիւ դա-  
 բիւ գիլղուիլ մնալը, մորենեոյն հրոյ մէջ  
 անկէզ մնալը, չոր փայտին ծաղկիլը և օձ  
 դառնալը, անասնոց եղած հարուածները,  
 աշխարհիս ջրհեղեղաւ ողորուիլը, Սողոմ  
 և Պոմոզին անցքը, ջրոյ ի գինի փոխար-  
 կուիլը, ցերեկով՝ լուսոյ և արեգական խա-  
 լարիլը և վարադուրին պատուիլը, հիւան-  
 դաց թաշկինակներով՝ բժշկուիլն, ևլն.  
 պարզապէս ի՞նչ պիտի իմանամք, և թէ  
 պէտք չէ՞ հետազօտել՝ թէ սոքա բնական  
 անցքեր էին թէ Աստուածային զօրու-  
 թեան յատուկ նշաններ կամ հրաշա-  
 քօրծութիւնք, և թէ երբ հետազօտեմք՝  
 որպիսի՞ առարկաներու գիտութեանց կը  
 կարօտիմք, որպէս զի կարողանամք բնա-  
 կանը որոշել անբնականէն և հաւատոյ  
 թշնամեաց բերանները կարկու ին:



Կաւ Ա, Պարոյ մէջ պարզ գրուած Արուսաղէմ քաղաքը, Ասորեստանը, Արարատը, Փղշտացիքը, Հիւսիսականները, Հագարացիքը, Ադրամլէքը, Սանասարը, Պաւլիթը, Սոպէսը, Փարաւօնը և Ասորագոգօնասորը պէտք չէ՝ իմանալ թէ՛ ո՞ւր են և ի՞նչ դիրք ունին, թէ՛ որպիսի՞ ազգեր են և այժմ՝ գոյութիւն ունի՞ն, և թէ՛ ո՞յք և ի՞նչ տեսակ մարդիկ են և որպիսի՞ անցքեր ունին, և այս տեղեկութիւնքը ամենաճիշտ և մանրամասն պարագայիքն է հանդերձ որպիսի՞ գիտութեանց միջոցօր ստանալ և իմանալ հնար է:

Ուրեմն եթէ կրօնի ստորագրութեան ղէ, և նորա սահման ընդարձակ է այնքան՝ որքան կրօնի գիտութիւն վսեմ՝ կարևոր միանգամայն իւրաքանչիւր Քրիստոնէի նուիրական պարագն է:

Սակայն մեր հոգևոր զպրօցներ երբ մեծ՝ վսեմ և անհրաժեշտ զլսաւոր պաշտօն մի ևս ունին՝ այս է՝ Հայաստանեայց Ազգեղեցւոյ ի պէտս պաշտօնեայներ ևս պատրաստել, վասն որոյ սոցա մէջ (զօնէ յատկապէս մեզապիսի ազգի նկատմամբ) մինչև երկրագործութեան և արհեստագիտութեանց և բժշկականութեան ուսմունքներ ևս պէտք է զի հաղորդուին: Ասան զի մեր Ազգեղեցւոյ պաշտօնեայք բարձր դիրք ունենալով և հովիւ լինելով Հայկազն ժողովրդեան վերայ, անշուշտ նոցա մտաւորական և բարոյական կարողութիւնքը և յատկութիւնքը վերին աստիճանի մէջ պիտի լինին, որպէս զի միշտ կարող լինին նոցա ոչ թէ լոկ կրօնական պիտոյքը մատակարարել, այլ և իկարևոր դէպս թիկունք կալ և օգնական լինել նոցա ամեն տեսակ կարօտութեանց և դար-

ման տանել, խրատել և ուսուցանել նոցա ինչ որ կարևոր է, ևս հանդիսա և արդիւնաւոր կենցաղավարութեան միջոցներ հաղորդել նոցին:

Ահաւասիկ աստանօր դիւրին է մակարելել և եզրակացնել հոգևոր ուսման և նորա սահմանին ինչ և որքան լինելը:

Արդ ամենուրեք Հայաստանեայց Ազգեղեցւոյ պաշտօնէից պարտաւորութեանց մէջ այսպիսի և այսքան վսեմ և ծանրածանր պահանջմունք բարդուած և լծորդեալ են, զորս կտարել հանապազ մեղքալցըր և անհրաժեշտ է և պիտի լինի անշուշտ:

Իայց թէ Հայաստանեայց Ազգեղեցւոյ մէջ կրօնի պաշտօնէից և ժողովրդեան ամիմեանս ունեցած յարաբերութիւնք և պարտաւորութիւնք ինչպէս են, և այս ամեն պարագերը միահաղոյն արդարև միայն հոգևորականաց վերայ բնաւաւորեալ են, այլ յարմար յօդուածով կիսօսիմք՝ ինչպէս անցեալ յօդուածով ևս խոստացած եմք:

ՎԱՆՔԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

